



C O N S U L T

« 26 » հայիսկ 2013թ.

ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն | Լիցենզիա ԱԾՈ 052

*ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական Սլավոնական Համալսարան
2012թ. տարեկան ֆինանսական
հաշվետվությունների վերաբերյալ*

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

*ԲՄԿ ՊՈՒՀ Ռուս-Հայկական Սլավոնական Համալսարան
Ռեկտոր՝ Ա. Դարբինյանին*

Եզրակացություն համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Մեր կողմից իրականացվել է Բարձրագույն Մասնագիտական Կրթության Պետական Ուսումնական Հաստատություն (ԲՄԿ ՊՈՒՀ) Ռուս-Հայկական Սլավոնական Համալսարանի և իր դուստր ընկերության՝ «Ուսմունք» դպրոցի, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ համախմբված հաշվապահական հաշվեկշիռը, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքների, համախմբված սեփական կապիտալում փոփոխությունների և համախմբված դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է միջազգային ստանդարտներին համապատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել համախմբված ֆինանսական

հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մենք պատասխանատու ենք աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան մեր կողմից իրականացված աուդիտի հիման վրա նշված համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր արտահայտած կարծիքի համար: Այդ ստանդարտներով պահանջվում է աուդիտը պլանավորել և անցկացնել՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ ողջամիտ երաշխիքներ ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են համախմբված ֆինանսական հաշվետվություններում ու համապատասխան ծանոթագրություններում արտացոլված տվյալները հիմնավորող փաստերի ձեռքբերման նպատակով մշակված ընթացակարգեր, որոնց ընտրությունը կախված է խարդախությունների և սխալների հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվություններում էական խեղաթյուրումների ռիսկերի առկայության վերաբերյալ աուդիտորական գնահատումներից: Ռիսկերի գնահատումները կատարելիս՝ աուդիտորը մշակում է համապատասխան ընթացակարգեր համախմբված ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության գնահատման, այլ ոչ թե ընկերության ողջ ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք կազմելու համար: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև կիրառված հաշվապահական հաշվառման սկզբունքների և դեկլարության կողմից կատարված գնահատումների, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր կողմից ձևափոխված կարծիք արտահայտելու համար:

Կարծիքի ձևափոխման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները չեն պարունակում բոլոր պահանջվող բացահայտումները <<Ծանոթագրություններ և այլ բացատրական տեղեկատվություն>> բաժնում ճշմարիտ ներկայացումը ապահովելու համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Ձևափոխված կարծիք

Մեր կարծիքով, բացառությամբ համապատասխան տվյալների վրա այն խնդրի հնարավոր ազդեցության, որը նկարագրված է Կարծիքի ձևափոխման հիմքեր պարագրաֆում, համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2012թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Բարձրագույն Մասնագիտական Կրթության Պետական Ուսումնական Հաստատություն (ԲՄԿ ՊՈւՀ) Ռուս-Հայկական Սլավոնական Համալսարանի և իր դուստր ընկերության՝ «Ուսմունք» դպրոցի ֆինանսական վիճակը և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Հաստատված է
<<Երևան-Աուդիտ Կոնսալտ>> ՓԲԸ
Տնօրեն՝
Որակավորման վկայական թիվ 022
Աուդիտոր՝
Որակավորման վկայական թիվ 017



Լ. Դոնյան

Ս. Բերբերյան

<<26>> հուլիսի 2013թ.